ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 4” Հոկտեմբերի 2012թ №123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԸ (ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի «Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N1202-Ա որոշման 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ֆինանսների նախարարություններից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ներկայացված առաջարկությունները, որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացին օժանդակող աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքների ղեկավարներին առաջարկել՝ աջակցել համայնքի տարածքում ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքներին.
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 4
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ հոկտեմբերի 4-ի N123-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԸ (ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Սուրեն Խաչատրյան -	ՀՀ Սյունիքի մարզպետ, աշխատանքային խմբի ղեկավար ղեկավար
Աշոտ Մարդյան -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Սեյրան Ավետիսյան -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Աշոտ Ծատրյան -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Լևոն Մարգարյան -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար
Նաիրա Ավետիսյան -	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության Սյունիքի մարզի տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
Արմեն Ավագյան -	ՀՀ ԿԱ ՊԵԿ Սյունիքի հարկային (տարածքային) տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ (համաձայնությամբ)
Արթուր Ալեքսանյան -	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության հարկային քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ (համաձայնությամբ)
Համլետ Ադոնց -	Գորիսի պետական համալսարանի պետական գնումների գործակալ (համաձայնությամբ):

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան